

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվան 6 ռուբ.
Սեզոնային համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Վամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

ՄԵԼԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանկի բառին 2 կոպեկ:
Տէլեֆոն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հոկտեմբերի 24-ին, երկար ու ծանր հիւանդութենից յետոյ, վախճանվեց

ՆՈՒՆԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՆԱՎԵՐԴԵԱՆՅ

Հանգուցեալի որդիքը, փեսան Գրիգոր Սարգսեան Կարախանեանցը և ընդը՝ Նատալիա Միքայէլեան Գաղինեանց, հաղորդելով այս մասին ազգականներին և բարեկամներին, խոնարհաբար խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեան, որ լինելու է հինգշաբթի, ամսիս 28-ին, առաւօտեան 10 ժամին, Քափանակեանցի տանից, Բէհթութեան փողոց, № 45 (նախկին Սաղօվայա) դէպի Մողղու ս. Գէորգ եկեղեցին:
Հոգեհանգիստը կը կատարվի չորեքշաբթի, ամսիս 27-ին, երեկոյեան 6 ժամին: Քաղաքը լինելու է Վերայի հանգստարանում:
1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւաբանական օգնութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կարեւոր բացատրութիւն. Վրաց թատրոն. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մենք մի քանի անգամ խօսել ենք այն անօգնական և անպաշտպան դրութեան մասին, որի մէջ գտնվում է մեր ազգաբնակչութեան հասարակ դասակարգը—իր իրաւունքների պաշտպանութեան վերաբերութեան: Գիւղացիները, քաղաքի չքաւոր դասը շատ անգամ կորցնում են իրանց արդար դատը միայն այն պատճառով, որ չը գիտեն ինչպէս վարեն իրանց գործերը, որ չունեն միջոց հոգալու երբեմն ամենաանպիտան ծախքերը: Այդ դրութեան կարող էին օգնութիւն հասցնել յատուկ գրասենեակներ, որոնք իրաւաբանական գործի վերաբերութեամբ կը կատարէին նոյն գերը, ինչ-որ կատարում են է-ժանագին և ձրի բուժարանները բժշկական գործում: Նման միջոց միջոց անհնար հանրամատչելի բուժարանների միջոցով պաշտպանութիւն ցոյց տալ անապահով հիւանդներին, ինչու նոյնը չէ կարելի գործարարել և այն չքաւոր մարդկանց վերաբերութեամբ, որոնք կարծես են իրաւաբանական խորհուրդների և օգնութեան:

Կծարդաբար, օգնութեան այդ եղանակը շատ դժուար է պատուաստվում կեանքի մէջ: Իրաւաբանները չեն խմբվում և չեն կազմում առանձին բերու իրաւաբանական օգնութիւն հասցնելու հասարակ ժողովրդին մատչելի պայմաններով, երկուզ զգալով, որ մի գուցէ այդպիսով նրանք բոլորովին զրկվին պրակտիկայից և ունենան անձնական ֆինանսեր: Նոյն իսկ Պետերբուրգի նման մի տեղում, որը յաճախ նախաձեռնող է օրինակ է եղել զանազան հանրօգուտ ձեռնարկութիւններին, միայն այս օրերս կազմվեց 12 հոգուց մի խումբ, որը բացել է Պետերբուրգի մօտ Սմոլենսկի գիւղում մի գրասենեակ, ուր ցանկացողները ամեն օր երկու ժամ կարող են զայ և խնդրել իրաւաբանական խորհուրդներ և ամեն տեսակ օգնութիւն հերթապահ փաստաբաններից, որոնցից մեծ մասը երգուեալ հաստատրմատարների օգնականներ են: Դիմողները վճարում են այդ իրաւաբանական օգնութեան համար այնքան, որքան կարող են, իսկ աղքատները բոլորովին տուրք են վարձատրութիւն տալուց:

Այն երկուզը թէ հանրամատչելի իրաւաբանական գրասենեակ բանալը կը ֆինանս իրաւաբանների արհեստին, ամենեւին հիմնաւոր չէ: Ապահովված, հարուստ մարդիկ կը շարունակեն իրանց գործերի համար վարձատրութիւն տալ տուաջկայ պէս և նոյն իսկ անյարմար կը համարեն զիմել ձրի օգնութեան, երբ որ նրանք կարողութեան տէր են: Գրասենեակը կը զրաւի ազգաբնակչութեան այնպիսի խաւեր, որոնք

կամ մինչև այժմ չէին զիմում իրաւաբանական օգնութեան, կամ զիմելով նրան թողնում էին իրանց գործերը աղքատութեան պատճառով կիսատ և անկատար, կորցնելով երբեմն ամենահաստատ դատեր: Աղքատ մարդիկ յաճախ այնպիսի դատաստանական գործեր ունեն, որոնք աշուղ ելք ստանալուց յետոյ կարող են բաւարար վարձատրութիւն խոստանալ, բայց կարծես են սկզբնական ծախքերի հոգացման և նախապատրաստական օգնութեան, ինչպէս ձրի բուժարաններ բանալը չէ ֆինանսում առանձին բժշկների գործերին, այնպէս էլ հանրամատչելի իրաւաբանական գրասենեակը չի ֆինանս փաստաբանների պրակտիկային:

Վերջապէս, եթէ իրաւաբանների դասակարգը առանձին ներկայացուցիչների կողմից փոքր ինչ ֆինանս կրէ, մի-թէ ինքը իբրեւ դասակարգ չէ շահվում, երբ նա բարոյապէս բարձրանում է և ցոյց է տալիս հասարակական պարտաւնասութեան մի փոքր օրինակ: Մի-թէ հասարակութիւնը իր չքաւոր եղբայրների համար չը պէտք է յուսայ ինտելիգենտ դասակարգից մի օգնութիւն այն մասնագիտութեան միջոցով, որ վերջինս ուսումնասիրել է ժամանակն է գործնական միջոցի դիմել և խօսաբանութեան վերջինս գործի վերածել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Անհիմն չէին մեր գուշակութիւնները: Կեռամարը, երբ լրագրական տեղեկութիւնները այլ ևս ոչ մի կասկած չէին թողնում, որ մեք երկրի են մի ամբողջ տարի պիտի տանջվի հայր պատկառութիւնից և երբ առաջնակարգ, անխտածելի պահանջ էր դառնում, որ հասարակական ինքնօգնութիւնը գլուխ բարձրացնէ ժողովրդական ազգային դէմ, մենք, չը նայելով մեր շուրջը, չէինք հաստատում, որ մեր եսամոլ, անբարեխիղճ հասարակութիւնը յօժարութիւն ունենայ մտածելու հասարակ ժողովրդի մասին, յօժարութիւն ունենայ գոնէ այս անդամ մարդկայնութեան նշույններ ցոյց տալու: Մենք սխալված չէինք: Մեր երկրի բնայային մասերում արդէն սկսվել է ձեռնարկ, բայց մեղանում դեռ ոչ մի գործ չէ սկսվել, դեռ ոչ ոք չէ էլ ուզում իմանալ, թէ ինչ կը լինի հազարաւոր մարդկանց դրութիւնը խուլ, մոռացված անկուններում: Յոյս կարելի էր դնել Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան վրա, որի նպատակը, կուրիւթիւնն էլ, ինչպէս սպասում էինք, բաւականացաւ միայն թղթեր գրելով, թղթեր, որոնք նրա պատմութեան մէջ պիտի ցոյց տան, թէ մի տարի, ժողովրդական դժբաղդութեան ժամանակ, նա քնած ու մեռած չէ եղել, այլ ուղեցել է մի քանի անգամ: Թուղթը հարկաւոր է, ի հարկէ, բայց երբ նա կիսում է կենդանի գործը, երբ դառնում է պարտաւորութիւններ կատարելու մի դիմակ, այն ժամանակ նա դառնում է մի զոհելի առարկայ: Ինքնեք զատեցէք, ընկերութիւնը թղթեր է ուղարկում, որ իմանայ կարողութեան չափը, թղթերը անպա-

տախտան են մնում մեծ մասամբ: Ընկերութիւնը յանձնում է իր անդամներից մէկին կազմել մանրամասն տեղեկագիր և այժմ նստած սպասում է, թէ երբ կը վերջանայ այդ գործը: Իսկ ժամանակը թռչում է, ցուրտ օրեր են զալիս, մերկերն ու քաղցածները նստած են իրանց ցուրտ տներում և չը գիտեն, թէ ինչ հրաշք պիտի իրանց ազատէ ծանր դրութիւնից: Թղթերը, որոնք գրվում են, ուղարկվում են, վերաբանութիւնների առարկայ են դառնում, ի հարկէ, չեն օգնի նրանց, և բանից դուրս կը զայ այսպիսի տեսարան: Բացառիկ համար թղթեր են շարադրվում, ուղղում, իսկ քաղցածը իր դատարկ ստամոքսն է արորում: Հէնց այս «թղթային» բարեխղճութիւնն էր, հէնց այս մեր «մանթոն» էր, որ չէր թող տալիս մեզ որ և է յոյս դնել մեր շատախօս, բայց անգործ ինտելիգենցիայի վրա: Գիւղատնտեսական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովը փառաւոր կերպով ապացուցեց այդ հանգամանքը: «НОВОЕ ОБОЗР.» լրագրի աշխատակից պ. Իվանովիչը նկարագրելով այդ նիստը, զալիս է շատ տխուր եղբակցութիւններին: Ընկերութեան պարտքն է օգնութեան հասնել այնպիսի դէպքերում, երբ գիւղատնտեսական պայմանների պատճառով ազգաբնակչութիւնը անեղանելի դրութեան մէջ է ընկնում: 1897 թ.ին կար մասնաւոր անբերրութիւն, բայց ընկերութիւնը շատ թույլ, աննշան գործունէութիւն ցոյց տուեց, այն էլ միայն այն ժամանակ, երբ Պետերբուրգի Ազատ Տնտեսական ընկերութիւնը հարց առաջարկեց:

Ներկայ տարին էլ նոյն ցուրտ, ձևական վերաբերմունքը: Վճռել են սպասել զեկուց-ձեկուց, որ պիտի բացատրէ անբերրութեան չափերը և կը սպասեն թէկուզ մի ամբողջ տարի և երբ գիւղատնտեսական այդ հոգաւորներին կասեն «ինչու, պարոններ, չօգնեցիք անբերրութիւնից ֆինանսաներին», ներանք ամենալուրջ կերպով մեղք կը գցեն զեկուցումը չը ներկայացնելու վրա և վրձա-կազարկան տեղեկութիւնների բացակայութեան վրա: Մի ինչ-որ զարմանալի խաղ է կատարվում ընկերութեան մէջ... Ամենքը ասում են, որ անբերրութիւն կայ և պէտք է մի որ և է բանով օգնել ազգաբնակչութեան և մի և նոյն ժամանակ ուզում են ձևակերպել այդ օգնութիւնը... Շատ լաւ գիտեն, որ Կովկասում չը կան վրձակազարկան բերօսներ, որոնք կարողանային ճիշդ տեղեկութիւններ հաղորդել անբերրութեան մասին, և էլ պահանջում են այդ տեղեկութիւնները և մատնացոյց անելով դրանց բացակայութիւնը, լուսնում են իրանց ձեռքերը:

Սա թէ ինչպէս է թաղվում կենդանի գործը: Կարօտեալներին օգնելու համար պէտք է նուրբատուութիւններ հաւաքելու թղթաւորութիւն ստանալ, պէտք է խնդրել, որ հարկերի մի մասը չէ մտածել, բայց տուէր ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ: Կարծես շատ դժուար կը լինէր պարտաւորութիւններ տեսնել և ապա ընկերութեան կողմից մարդիկ ուղարկել կաշտութեան տեղերը, որոնք յայտնի են լրագրի ներքից, ցուցակագրել օգնութեան կարօտներին, բայց անել ձրի ճաշարաններ...

Տեսնելով թէ որպիսի անախորժ դրութեան մէջ էին ընկնում Գիւղատնտեսական ընկերութեան անդամները ամեն անգամ, երբ կըրկնվում էր անբերրութիւնը բառը, ես մտածում էի. ինչու նրանք այդքան անախորժ դրութեան մէջ են գտնում իրանց, ինչու երկրի մի խաղ են խաղում, նստում են երկուսի-երկուսի վրա... Չը հետաքրքրվելով անբերրութեամբ, նրանք, այնու ամենայնիւ, յայտարարում են, թէ այդ անբերրութիւնը արժանի է իրանց ուշադրութեան... Չը կասեցնելով օգնել, նրանք ասում են, թէ պէտք է օգնութեան հասնել և ծածկման են այդ ամենը, ինչ-որ բանից վախենում են... Եւ սակայն ամենքը օգուտ կուենային, եթէ ընկերութիւնը բացարձակ խաղ խաղար և յայտարարէր, թէ գիւղական տնտեսութեան հետ ոչ մի գործ չունի...

Այն, դա էլ, եթէ կամենում էք, «առաքել» նութիւններէ շարքում կը գրվէ: Դոնէ կարելի կը լինէր ասել թէ մեր ինտելիգենցիան անկենդ է: Վերին աստիճանի բնորոշ է այդ ուղղութիւնի անկարողութիւնը, որի մէջ տառապում

են մեր հասարակական գործիչները: Մենակ Գիւղատնտեսական ընկերութիւնը չէ, որ «երկու անգամ» վրա նստելու վատութիւնն է ցոյց տալիս այնպիսի ժամանակ, երբ պէտք է մի գոյն ցոյց տալ, երբ պէտք է այնպէս անել, որ զիմացինը գոնէ չը խաբարի: Մենք ուզում ենք, որ մեզ վրա միշտ պապկայ մի ձիւնափայլ մաքրութիւն, մինչդեռ մեր մէջը միայն դատարկութեան, անձնապաշտութեան և այլ այսպիսի յատկութիւններ ենք կրում...

ԿԱՐԵՒՈՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Դրամական այն տաղանայի աւելումը, որ այժմ տրորւմ է Ռուսաստանում, ֆինանսների մինիստրութիւնը տուեց պաշտօնական մի բացատրութիւն, որից առաջ ենք բերում հետեւեալ կէտերը:

Հասարակութեան մի քանի շրջաններում կարծու են թէ ներկայ դրամական տաղանայի մի զլխաւոր պատճառն էլ այն է, որ Ռուսաստանում պակասել է դրամի քանակութիւնը: Այդ հայեացքը շատ անհիմն է. փողի քանակութիւնը ազգաբնակչութեան ձեռքում ներկայումս աւելի մեծ է, քան երբ և ինչ եղել է նախկին ժամանակներում: Արդարեւ այժմ փող աւելի է, քան 1892 թ.ին, երբ փողի ամենամեծ առատութիւն էր, 215 միլիոն բուրլով: Սխալ է և այն կարծիքը, թէ ոսկէ դրամը արտասահման տեղափոխվելու պատճառով պակասել է պետական բանկի մէջ այն ոսկու քանակութիւնը, որով ապահովված է Ռուսաստանի թղթադրամը: 1897 թ.ին ոսկեդրամի այն քանակութիւնը, որ աւելորդ էր անհրաժեշտ պաշարից, կազմում էր 158 միլիոն, մինչդեռ այժմ 588 միլիոն է: Այդպիսով եթէ չը հաշուէք այն ոսկին, որ գտնվում է դանձաբառնում և արտասահմանում, իբրեւ պահեստ, չը հաշուէք այն 270 միլիոնը, որով ապահովված է թղթադրամը, մընում է վերոյիշեալ անապահով դրամը 588 միլիոն բուրլ: Ներկու տարի ասպի, 1897 թ.ին սեպտեմբերին, ոսկի կար Ռուսաստանում 1,209,800,000, իսկ ներկայ 1899 թ.ին հոկտեմբերին 1,524,000,000 բուրլ:

Լովում է և մի այս տեսակ դանձաբառ, թէ ինչու պետական բանկը և ֆինանսների մինիստրութիւնը փող չեն բաց թողնում նորից փողի պակասութիւնը չէզոքացնելու համար: Պետական բանկը ամենեւին չէ դժուարացրել փող բաց թողնելը, նա տալիս է ապահով վեկելներ և ապահով փոխառութիւնների համար փող, նա զանազան դիւրութիւններ է տուել օգտվելու բանկի կրեդիտից: Պետական դանձաբառն դրութիւնը կատարելապէս բաւարար է:

Պաշտօնական բացատրութիւնը զալիս է հետեւեալ եղբակցութիւններին: 1, Փողի թանգանալը դա իրական մի երևոյթ է, որը պէտք է այդպէս էլ նկատել. դա չհանգեցր երկրով չէ, բայց նրա նշանակութիւնը չը պէտք է չափազանցնել: 2, Առանձին փաստերը չը պէտք է ընդհանրացնել. մի քանի առևտրական գործեր, արդարեւ գտնվում են դժուար կացութեան մէջ մնացած ամուր և առողջ զարգացում ունեցող ձեռնարկութիւնները ապահով վրձակի մէջ են: 3, Անհրաժեշտ է վերաքննել բօսաւորների և ակցիոնեական ընկերութիւնների մասին եղած օրէնսդրութիւնը: Արդէն ժողովված են անհրաժեշտ նիւթերը և գործին ընկացը կը արվի: 4, Ներկայ դժուարութիւնները ոչ մի վտանգ չեն սպառնում ոչ թղթադրամի ապահովութեան, ոչ պետական բանկի և ոչ պետական դանձաբառի դրութեան, կամ երկրի ընդհանուր տնտեսական վիճակին:

Ֆինանսների մինիստրութիւնը ի վերջոյ մեծ յոյս է դնում պարբերական մամուլի վրա, որ կարող է ճիշդ տեղեկութիւններ տալ հասարակութեան, չը թաղցնելով ճշմարտութիւնը և թղթ չը տալով, որ թղթը և անստոյգ լուրեր տարածվեն ազգաբնակչութեան մէջ:

Ֆինանսների մինիստրութեան դէպի մամուլի օրդանները ուղղած հրաւերը մի համակրելի երևոյթ է, որ անկասկած կուենայ իր բարեբար

հետևանքները: Մշակիչ մէջ ներկայ դրամական ազդեցութիւնը վերաբերութեամբ մեր յայտնած հայեացքները համապատասխանում են ֆինանսական բարձր հիմնարկութեան արած ներկայ բացատրութեան ընդհանուր իմաստին:

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Անցեալ հինգշաբթի, հոկտեմբերի 21-ին, վրաց դերասանական խումբը տուեց իր երրորդ ներկայացումը: Այդ գիշերը մեծ բազմութիւն էր հաւաքվել թատրոնում և դա ունէր իր պատճառները. նախ՝ այդ երեկոյ առաջին անգամ բեմ պէտք է դուրս գար տաղանդաւոր ամուսիններ պ. Արաշիձէի և տ. Սափարովայի (ծագումով հայ) դուստրը՝ օր. Անատասիա Արաշիձէ, իսկ երկրորդ՝ պէտք է խաղացվէր զօրեցի վրացախօս մի հայուհու, օր. Ալիսանի (հեղձ անուն) նոր կոմեդիան «Փող և Ծագում»: Այս օրիորդը երկրորդ անգամ է, որ հանդէս է գալիս վրաց հասարակութեան առաջ իբրև թատերագործ: Սրա առաջին գրուածքը՝ «Գնդակներ կամ Բոլիշէ» կոմեդիան խաղացվեց անցեալ տարի, որի մասին խօսել էինք «Մշակի» № 6-ի մէջ: Այս կոմեդիան մէջ վրացախօս հայ օրիորդը մտքակում էր հայ հասարակութիւնը, դուրս բերված հերոսները, որոնք պատկանում էին ժամանակակից ինտելիգենցիային (?), բոլորն էլ բացասական անհատներ են, բայց ոչ տիպեր, այն էլ նկարագրված հեշտաւոր կերպով:

Իսկ այս նոր գրուածքը մէջ օրիորդը կոմեդիայի նիւթ է դարձրել վրաց անակցած կալուածատէր իշխաններին և աղուկականներին մի կողմից և հայ բուրժուազիան միւս կողմից: Բայց աւելի լաւ է պիտի ինքն խօսի:

Ձեր առաջ բեմի վրա է մի ծերունի՝ վրացի իշխան-կալուածատէր, որը նիւթական անակցութեան վերջին աստիճանի վրա է, որի հողերը դուրս են դրված հայ վաշխաւորի մօտ: Իշխանն ունի մի կին և մէկ էլ մի տղայ դասիկ. սա մօր «աղիւղ-մաղիւղն» է, որ եղել է ամեն տեսակ դպրոցներում, բայց իր անընդունակութեան պատճառով ոչ մի տեղ գլուխ չէ դուրս տարել և վերջը «բեղաբերուց» մտել է պիտուական ծառայութիւն, բայց այստեղից էլ հեռանալով, դեռ ժողովրդական պատճառով, վերադառնում է տուն՝ տնտեսութեամբ պարագայու: Նա մի թեթեւամտ, թեթուս երիտասարդ է, որին ներկայ դարձում ամեն մի ջայթափումով կը պատահէ: Հայրը որդու այս վարքի վրա դայրանում է, իսկ մայրը, ի հարկէ, ոչ: Անընդունակ որդու դադար վարել անտեսութեան մասին այն է, որ պէտք է դրաւ զինք եղած կալուածքները և բէֆեր անել: այդ մասին նա յայտնել է իր նման մի թեթուս երիտասարդ բարեկամին և հասանութիւն է դրտել նրանից: Ինչպէս ընական է, մօր գլխում ծագում է միտք՝ ամուսնացնել որդուն, այն էլ այն հայ վաշխաւորի աղջկայ հետ, որն ունի մեծ օժիտ: Նա քաջվում է վաշխաւորի հասարակ ծագումից, բայց ինչ արած: Բանը գլուխ բերելու համար որդուն պէտք է տանել քաղաք: Որդին չոր էլ չունի. թէ չորերի և թէ բանիկ պարտքը տալու համար հարկաւոր է փող: Հայրը ճարտասանված, կոնֆից ստիպված, իր երկու հագարանոց աղքին գրաւ է դնում 400 ռուբլով մի վրացի վաշխաւորի մօտ:

Երկրորդ գործողութեան մէջ նկարագրված է հայ վաշխաւոր-փողարկչի ընտանիքը: այստեղ ամեն լայն հիմնված է հաշիկ վրա: Վաշխաւորն հարստութեան ձեռք է բերել փողը շահեցնելով, շահերը բարդելով, կալուածքները դրաւ վերցնելով և այլն: Այս մարդու երեք որդիները բարձրագոյն ուսում են ստանում և աղջիկն էլ գիմնազիան աւարտած է: Իշխանը, մօցիւթիւնը որդարկելուց յետոյ, անձամբ ինքն է գալիս ինդիւստրի, բայց հայ վաճառականը դէմ է այս բանին: Ճարտադրաբան, նրա թեթեամտութիւնը կամենում է իր աղջկան անպատճառ ամուսնացնել իշխանի հետ և դարձնել իշխանուհի, որ ինքն էլ մտնի բարձր շրջանը, ուստի խոստանում է իշխանին բանը գլուխ բերել: Երիտասարդով յաջողութեամբ է նաև զինավորաւ աւարտած օրիորդը, որը կամենում է ամուսնանալ «романично, а не прозаично». վերջ ի վերջոյ բանը գլուխ է գալիս և երրորդ գործողութեան մէջ երիտասարդ իշխանը հայ վաճառականի տանու փեսան է: Այս վրացի «գիմ-մօզին», անվերջ բէֆերի նուիրված, շաքարմեղրով տանիցը կոչում է, վատնում է բոլորը, նոյն իսկ իր սեփական հողերը, որ յետ էր գնել աները. ամեն անգամ դիմում է կնոջը և անհերքել փող պահանջելով կեր ու խումի համար, իսկ երբ սրանք մերժում են, խանչալ է տանում սպանելու: Իշխանը ոչ միայն ինքն է բէֆ անում իր հաշուով, այլ և նրա ընկերները:

Այսպիսի մի բէֆի ժամանակ, նա և նրա ընկերները մի հիւրանոցում մտնող են սպանում և հարբած վերադառնում են տուն, ուր և նրանց ձեռքաւորում է պրիստունը:

Պիէսի բովանդակութիւնը այնքան էլ հարուստ չէ և ոչ էլ նոր: Հեղինակը դնում է հասարակութեան առաջ փողի և ծագման հարցը և այն միտքն է յայտնում իր հերոսի բերանով, որ «երջանութիւն և հանգստութիւն չէ կարող լինել այն տան մէջ, ուր մէկը բարձր ծագում ունի, իսկ միւսը՝ ստոր: Բարձր ծագման տէրը իր փրկութիւնը գտնում է փողի մէջ, ծախելով տիտղոսը, իսկ հասարակ ծագման տէրը փողի միջոցով ձեռք է բերում տիտղոս և չըբան: Թոււ է թէ հեղինակը ուզում է մատնանիլ անել մի կողմից բուրժուազիայի զօրեղանալը փողի միջոցով և միւս կողմից՝ աղուկականութեան անկումը տրեստական պատճառով: Սա, ի հարկէ, նոր բան չէ, այլ յիշեցնում է վաթսուական թւերը և այսպիսի տիպեր Վ. Սունդուկեանցի պիէսների մէջ կան: Այս մօտիվները այժմ չեն հետաքրքրում. այժմ վրաց հասարակութեան մէջ էլ առաջ են եկել բուրժուազիա և վաշխաւորներ: Անձնաւորութիւնները բոլորն էլ ծանօթ են, նոր տիպեր չը կան: Նկատում է հեղինակի մէջ զիտողական ընդունակութիւն. նա մատնանիլ է անում՝ հին սերնդի թեթև հայեացքները, ձգտումը դէպի բարձր, նոր սերնդի թեթևամտութիւնը, կրտսեր-պուճու ուսումը և այս բոլորը թուեցիկ կերպով: Պիէսը մի պատկեր է կանգնել վերջրած, բայց ոչ բարձր կանգնել և բոլորովին չէ համապատասխանում կոմեդիայի պահանջներին: Նայողը հետաքրքրութիւն է զգում, դիտողները թեթև են և ոչ խորամաստ. թէ հայ և թէ վրաց ընտանիքները նկարագրված են շատ կոպտի: Հեղինակը հակադրութեամբ անում է զարծած և աղուկութիւնների բարձր և յատկութիւնները նկարագրելու համար: Նա չը պէտք է մոռանայ, որ բեմի մի վերին աստիճանի նուրբ չիօս է, այստեղից պէտք է սովորեցնել բարին, լաւը, գեղեցիկը, զգայի մարդու կրքերը և ոչ թէ հակադրել անել. դուցէ նա կարծում է ընական է այսպէս անելը, որովհետև կենքերի մէջ տեղի են ունենում շատ կոպտութիւններ, բայց բեմի և կենքի մէջ մեծ զանազանութիւն կայ, աստիճաններ կան. ինչ որ կենքի մէջ թողարկելի է, բեմի վրա թողարկելի չէ և հակառակը: Թատերադրու պէտք է ծանօթ լինի գեղարուեստի այս պահանջների հետ: Թանկարծ բեմից լսում էք լպիւր խօսքեր՝ տոտուցիք քաղթիւն, «գրուգ», «բարեկալ» և ոչ մի անգամ, այլ մի քանի անգամ. և այդ «բարեկալ» բառի վրա վրաց հասարակութիւնը հրճվում է և ծափահարում է (?). բեմից պէտք է քաղուղի միութիւն, սէր և չը սերմանել ատեւութիւն: Իսկ այսպիսի փողոցային ձևերը զինք բեմի վրա կը նշանակէ մասսայի ինտինկտները գրգռել, իրար հետ թշնամացնել: Մենք հաւատարմեք ենք, որ հեղինակը այս բանը գրել է անգիտակցաբար, անանց որ և է յետին մտքի, իբր թէ ուզեցել է երկու կողմերի ստորութիւնը և աշխարհայեցողութիւնը ցոյց տալ, բայց մասնաւոր այդ բանը չէ հասկանում, դրա համար կան ուրիշ միջոցներ: Ա վերջապէս, եթէ այդ հասարակ իրողութիւնը երիտասարդ հեղինակին ծանօթ չէ, ինչ են անում պարսիկներ բեմիօրները, որոնք խոշոր տաւերով ստորագրում են իրանց անունները. միթէ չեն հասկանում կամ լսած չեն թէ ինչ է նշանակում թատերական գրականութեան մէջ զբոսական վայելչութիւնն ասած բանը, որի շրջանից դէմ ամեն ինչ աւելորդ է, եթէ նոյն իսկ ընական լինի կենքի մէջ: Բայց ո՞վ գիտէ, դուցէ այդ պարսիկներն էլ շատ չեն հեռու գնացել ամբոխի ճաշակից և հասկացողութիւններից:

Ինչ վերաբերում է նոր գէրիտանտուհի օր. Ա. Արաշիձէին—պէտք է անել, որ սա ունի լաւ գերաստուհի դատաւար. բոլոր յատկութիւնները. թէ և ձայնը փոքր ինչ նուազ է, ունի լաւ գիկցիւմ, միակի, համարձակ է իրան պահում բեմի վրա: Վրաց հասարակութիւնը սիրով ընդունեց օրիորդին և վարձատրեց ծափահարութիւններով: Կարելի է շնորհաւորել վրաց բեմը և հասարակութիւնը. օրիորդը մի կատարեալ դիւտ է բեմի համար, և նրան մենք ցանկանում ենք առաջադիմութիւն:

Thaleia

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 18-ին

Ամսի 17-ին կայացաւ «Բարասոն» ընկերութեան երկրորդ օրինաւոր ժողովը: Ներկայ չէր միմիայն պ. Գեորգիճեանը:

Ավարտագող յանձնաժողովի տուած համառօտ հաշուից երեաց հետեւալը: Ընկերութիւնը

հիմնվելու օրից մինչև ներկայ հոկտեմբերի մէկը ունեցել է մուտք մօտ 450 հազար ռուբլի, ծախս—500 հազար, պարտքը հաւասար է մօտ 32 հազար ռուբլու: Բաժինների թիւը սկզբում եղել է մօտ 3 հազար, այժմ միայն 800-ի չափ է մնացել, միւսները վճարներ չանելու պատճառով զրկվել են իրանց իրաւունքներից և տուած փողերից: Եթէ ընկերութիւնը գործերը դադարեցնէ՝ կը զրկվի ունեցած հողերից՝ կապալի պայմանագրի համեմատ, իսկ եթէ իրաւունքները պահպանելու համար իւրաքանչիւր հողի վրա մի-մի հոր պայմանագրով խորութեան հասցնելու լինի, հարկաւոր է նորից 80 հազար ռուբլու չափ փող մտցնել:

Գալով հիմնադրներին՝ ասացին, որ յանձնաժողովը չէնց սկզբից տեսնելով, որ Բողոքողայի վրա յոյս դնելը անստուծութիւն է, քանիցս խորհուրդ է տուել այնտեղի 6 հորից միայն մէկը շարունակել և բոլոր ոյժը գործադրել Գողթնովից գնած հողի վրա, բայց հիմնադրները յամառութեամբ իրանց իմացածն են առաջ տարել: Վարչութիւնը վերին աստիճանի անփութ է անհոգ է գտնվել զէպի իր վրա վերցրած պարտականութիւնները: Օրագրերում շարունակ նկատողութիւններ են արված, թէ նիւթեր կամ գործքներ չը լինելու պատճառով գործերը կանգ են առնում, մինչդեռ նիւթերն ու գործքները ընկերութեան հողերում աննպատակ թափված են: 28 հազար ռուբլու երկաթն էլ, բանից դուրս է գալիս, որ կորած չէ, այլ մասամբ հանքերում է ցրված, մասամբ ուրիշներն արհեստանոցներում թափված, առանց որ և է գործադրութեան, մինչդեռ շարունակ նոր երկաթ են առել և 70% մուրահներ տուել: Դրան առնել են՝ «էրէլ չի—մըրէլ է», «էրէլ չի—դէն են ձգել»: Այս միջոց միայն ընկերութեան վարչութիւնը հարատւորութիւն չէ ունեցել իր կառավարչին ունենալ և գործերին նայել յանձնել է մի ուրիշ արհեստանոցի կառավարչին, որը իր խելից կտրածն է արել, անպէտք գրտնելով վաղուց գնած երկաթը, նորն է պահանջել, ինքը իր ձեռքով գնել, իր արհեստանոցում խողովակներ պարտաստել, իր ուզած գինը նշանակել և այլն: Այսպիսի անտէրութեան պիտի վերագրել, որ չը նայած մէկ ու կէս տարի է անցել, ոչ մի հոր տեղ չէ հասցրած, իսկ հանքանիւրը թէ և ոչ են սկսել, բայց աւելի խոր են քանդել: Ընկերութիւնը ունեցել է «Բողոքողայի ջրանցքի» արժէթղթեր, որ լաւ ապագայ էին խոստանում. վարչութիւնը, հակառակ յանձնաժողովի ցանկութեան, ծախել է: Հիմնադրները, տեսնելով գործերի վատ ընթացքը, հրաժարվել էին հէնց սկզբում իրանց առձիկներից, այժմ հաշիւը երկուս է, որ վերջը փոշմանել և 4500 ռ. իրանց գրպանն են դրել: Այդ ուժեղները բաւական չաղ-չաղ են, պ. Ծատուրեանին 8000 ռ., պ. Գեորգիճեանին 2400 ռուբլի, մնացած երկուս հիմնադրներին 1000-ական ռուբլի: Հասարակութեան աչքին թող փնտռեալ համար 6000 ռ. են վատնել ընկերութիւնը ակցիոններով դարձնելու համար, կարծես անուան փոփոխութիւնը պիտի ազատէր ընկերութիւնը անկուսից:

Համառօտ հաշիւից այսքան իմացանք: Ենթադրում ենք, եթէ ընկերութիւնն ու հաշիւը մանրամասն լինէին—շատ զեղծումներ և անբարեխղճութիւններ կանալուր պիտի լինէին: Թանձնաժողովի երաւակցութիւնն է. հիմնադրները գործին անտեղեակ և միանգամայն անընդունակ մարդիկ են և եթէ այսուհետ նրանց ձեռքը մի միջոցն էլ տալու լինենք, նոյն արդիւնքը պիտի ստանանք:

Գործերը շարունակելու համար՝ ընտրվեց մի յանձնաժողով 4 հիմնադրներից, վերաստուգող յանձնաժողովի 3 անդամներից և 2 նոր ընտրած անդամից—պ. Վաչեանից և պ. Գրիգորեանից: Գործերը կողմից մի մարդ պիտի հրահրեն զործերը նրան: պիտի յանձնեն, որ իրանց հսկողութեան տակ վարել:

Թոյլ ենք տալիս մեզ մի հարց առաջարկել վերաստուգող յանձնաժողովի պ. պ. անդամներին: Դուք որ օր առաջ նկատել էք, որ հիմնադրները ընկերութիւնը զէպի կորուստն են տանում, դուք որ տեսնում էիք, որ ձեզ չեն լսում, ինչու չէիք օգտվում ձեզ տուած իրաւունքից, հրաւիրում բաժնետէրերին և բացատրում գործերի դրութիւնը, թերեւ այն ժամանակ կարելի լինէր չարքի առաջն առնել: Այս օր մենք ձեզանով էինք պահանջով կարծում էիք, որ դուք ամեն բանի մասին իր ժամանակին իմաց կը տաք, իսկ դուք միայն այն ժամանակ պարզեցիք եղելութիւնը, երբ բանը բանից անց էր կացել և, ով գիտէ, դուցէ դեռ էլի լուէիք, եթէ ձեզանից հրապարակով հաշիւ չը պահանջէին:

Ձեր վարժուիքը թոյլ է տալիս մեզ ձեզ ևս մեզ սակից անուանել վարչութեան, և ձեր մեղքը աւել

լի մեծ է, քան նրանք. եթէ նրանք տգիտաբար յանցանքը գործել են, դուք գիտակցաբար ծածկել էք: Դուք նոյնքան անընդունակ յանձնաժողով էք, որքան նրանք անընդունակ վարչութիւն:

Ձեզանից մէկը վարչութեան համար միջնորդի դէր է կատարել և 5000 ռուբլի վարձատրութիւն ստացել, այդ հինգ հազարը արգելել է նրան անաչառ լինելու: Միւսը միայն լաւ օրերին էր ուզում անդամ լինել, վատ օրերին իր պարտականութիւնները ճանաչել չէր ուզում, թէ և վատ օրերը դուք էք ստեղծել: Մէջոց աննպատակ կորչում է կէս միլիոնը, բոլորը կօպէկ-կօպէկ հաւաքած, սև օրվայ համար պահած և միամտաբար ձեզ հաստացած: Ի՞նչու չէր կարելի անել այդ գումարով—ինքներդ դատեցէք:

Բաժնետէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻ

Ժանտախտի վերաբերութեամբ բարձրագոյն հաստատված յանձնաժողովը յայտնում է հետեւեալը: Պարտուգալիայում հոկտեմբերի 1-ից մինչև 15 (նոր սոմարով) նորից հիւանդացի են Օպորտօ քաղաքում 62 անձ և մօտակայ Բազուկով գիւղում 4 անձ, մեռել են Օպորտօում 11 և Բազուկովում 1 անձ: Բացի այդ՝ ժանտախտ երեաց Օպորտօյն կից գտնվող Vila Nova de Gaia աւանում, որտեղ հիւանդացան երկու անձ, և Գուիմարես քաղաքում, որտեղ հիւանդացել է 1 անձ: Չը նայելով խիստ դեղինֆեկցիային, ժանտախտը կրկնվեց նոյն տներում: Ինքնուրիշֆեկցիայի անպարտկալութեան պէտք է վերագրել այն բանը, որ դեղինֆեկցիայով չէ ոչնչանում վարակման գլխաւոր աղբիւրը, այն է՝ մըկները, որոնց մէջ ըստ երևոյթին ժանտախտը սաստկանում է. փողոցներում մշտապէս պատռահում են սատկած միներ: Այս պատճառով քաղաքային վարչութիւնը որոշել է վարակված ընկալաւորների հանել բոլոր ընականներին 9 օրով և դեղինֆեկցիայի կատարել մասնաբաժան կերպով, իսկ Բազուկովում և Ռիօ Տիւստոյում բոլորովին կրակ տալ վարակված անները: Ժանտախտի տարածվելը ստիպում է հնաբիւ միներ կոտորելու մի իրական միջոց:

Կիրակի, հոկտեմբերի 24-ին, Քիֆիսի ս. Գաւրիէլ եկեղեցու գաւթում օրհնվեց Կիւրիի Կիւրիի ու դեղինֆեկցիայի վրա դրած կիւրիաները: Հանդիսին ներկայ էին Քիֆիսի քաղաքի ներկայացուցիչները, մամուլի ներկայացուցիչները հանգուցեալի ընտանիքի անդամները և զանազան տեղերից եկած՝ յարգողներ: Պատարագ և հողեհանգիստ կատարեցին Գորու եպիսկոպոս Լէօնիդ և Ալազիդի եպիսկոպոս Կերիօն: Գերեզմանի վրա ձառ խօսեց Պատրիկ Պատրիկը զրկելին Քիֆիս քաղաքի, վրաց դրաւտական ընկերութեան, վրաց դրամատիկական ընկերութեան, վրաց աղուկականութեան բանկի, «Վիլ-Իրա» լրագրի, հանգուցեալի ընտանիքի կողմից: Հանգուցեալը մեր երկրի վաթսուական թուականների աչքը ընկնող գործողներից մէկն էր. նա մեծապէս օգնել է ձորերի պատմութեան դադարաւոր յաղթանակին, գործել է Քիֆիսի քաղաքային ինքնավարութեան սկզբնական շրջանում քաղաքային պաշտօնով. նա եղել է կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահ և մասնակցել է մեր երկրի հասարակական ուրիշ նշանաւոր գործերի մէջ:

Կիրակի օրը, հոկտեմբերի 24-ին, Ավաշեան ժողովրդական ընթերցանութեան դահլիճում մի խումբ սիրողներ տուին հայկական մի հանրամատչելի ներկայացում: Խաղացին «Երկու հարիւր հազար» և «Փառաստաւորի մօտ» փողովիները: Նախաձեռնողների շնորհիւ ամեն բան լաւ անցաւ: Տիկին Ջաբէլ և պ. պ. Ն. Աբրահամեան և Միրզոյանի իրանց խաղով հասարակութեան մեծ դուարձութիւն էին պատճառում: Տ. Ջաբէլ այնքան կենդանի էր խաղում «Փառաստաւորի մօտ» փողովիում, որ նոյն իսկ դերասանների ծիծաղը շարժում էր: Վատ չէին նաև միւս դերակատարները: Ցանկանում ենք ժողովրդական ներկայացումների նախաձեռնողներին աւելի աջողութիւն, որ գոնէ ամիսը մի անգամ հանրամատչելի ներկայացում տալով կարողանան անմիկ ժողովրդին դրաւել զէպի այդ պիտի մի կրթիչ հաստատութիւն:

Մօսկվայից «Новое Время» լրագրին հետագրում են հոկտեմբերի 19-ից: Հոկտեմբերի 28-ին Մօսկվայի դատաստանական պալատում նշանակված է մի շատ հետաքրքիր գործ: Քննվելու է երկու համարի առաջ վախճանված մօսկվայի միլիոնատէր Խալաթովի կտակը ընդդէմ գործ

ծը: Այդ կտակը այնքան էլ սովորականներէն չէ: Թալաթօվը իր ամբողջ հասցին կարողութիւնը կտանք թողնելուն և դրանց ապագայ որդիներին, իսկ որդիներին և իրական սեռին պատկանող բոլոր ժառանգներին, բացի կնոջէն, իրենց ժառանգութիւնից: Բայց այդ թողնելն ևս, իրանց տարօրինակ պայմաններով, ինչպէս ասված է կտակի մէջ, ստանում են ժառանգութիւնը ոչ թէ միանգամից, այլ 1914 թին: Այդպիսով, հանգուցեալի օտարոտի կամքը համաձայն, հարազատ որդիքը ահապայ հառաւում էին իրանց ծնողների թշնամով: Թալաթօվը որդիքը դանդաղ ներկայացրին դատարան՝ պահանջելով քանդել իրանց հօր կտակը, իսկ թողնելին հաւատարմատարները և խնամակալները միացան այդ միջնորդութեանը: Նահանգական դատարանը հենց այդ մտքով էլ վճռեց գործը, կտակը անվաւեր համարելով: Ամեն ինչ խաղաղութեամբ կը վերջանար, եթէ գործը մէջ չը խառնվէր Քիթիլիի հայոց վանքը, որին Թալաթօվը կտակել է թաւական խոշոր գումար: Լուր է պատու, որ Թալաթօվները առաջարկել են վանքին դործը հաշտութեամբ վերջացնել, բայց վանքի հաւատարմատարները գործը անցկացրին դատաստանական պայտեր: Այդ դատին մասնակցում են մի շարք յայտնի իրաւաբաններ՝ Պրոքսիլի, Մուրադի, Շերեմետևսկի, Բիխովսկի, Ստոլպովսկի, Գրէյտեր և շատ ուրիշներ: Գործը մեծ հետաքրքրութիւն է յարուցանում դատաստանական աշխարհում, և մի և նոյն ժամանակ տաք վիճաբանութիւններ և ենթադրութիւններ ռաւարկայ է դարձել ամբողջ Մոսկվայում:

Հոկտեմբերի 18-ին Մոսկվայում, Լազարեան ճեմարանի շինութեան մէջ, ինչպէս հաղորդում է «Русскія Вѣд.» լրագիրը, պրոֆէսոր Գ. Թալաթօվի նախագահութեամբ կայացաւ Լազարեան ճեմարանի նախկին աշակերտների ընկերութեան հիմնադրների առաջին կազմակերպիչ ընդհանուր ժողովը: Նիստի մէջ կարգացվեց ընկերութեան նորին հաստատված կանոնադրութիւնը, որի նպատակն է օգնել ինտերնատի գիմնադրական և մասնագիտական դասարանների չքաւոր աշակերտներին՝ չարունակելու իրանց ուսումը ինտերնատում, մտնելու կայսրութեան համալսարանները կամ բարձրագույն դպրոցները, նոյնպէս չափազանց անբաժնետիրական դէպքում օգնել ուսումնական տնտեսության առաջ ինտերնատից դուրս եկող աշակերտներին: Ապա տեղի ունեցան պաշտօնական անձնոց ընտրութիւնները: Նախագահ ընտրվեց Մոսկվայի համալսարանի ընկերութեան օգնական Ս. Ս. Նէֆէդինով, նախագահի օգնական պրոֆէսոր Գ. Թալաթօվի:

Առաջիկայ նոյեմբեր ամսի 3-ին Պետերբուրգում կը սկսի իր գործունէութիւնը մի յատուկ ժողով, որ հրաւիրված է ընկնել և բարեփոխել Կովկասի և Անդրկասպեան երկրի հաղորդակցութեան վերաբերեալ կարգերը և կանոնները:

ԷՋՄԻԱՇՆԻՑ մեզ գրում են. «Լուր է պտուտում, որ Վեհափառ ժողովը է ուղևորվել դէպի Քիթիլի և ձեռն աշխատել անցկացնել»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Բազուի զինուորական ատեսանը ամսի 15-ին, 16-ին և 17-ին նիստեր ունեցաւ, և վիճակով զինուորական հետեւաւորները հայերից մի մարդ (Քիլի վարից), հրէաներից 11 մարդ, և ռուսներից 15 մարդ, ընդամենը 27 մարդ: Նրանց կը տանեն ծառայելու երկու ամսից յետոյ»:

ԷՋՄԻԱՇՆԻՑ մեզ գրում են. «Մարց կառուածը վերանայող նշանակվեց Թովում վարդապետ Բաղդասարեան, որ և ամսի 17-ին ուղևորվեց իր պաշտօնատեղը: Նշանակված են նոյնպէս՝ Մատթէոս վարդապետ Մատթէոսեան՝ Ալեքսանդրօպոլի յաջորդ, իսկ Միխիլ վարդապետը՝ Քիթիլի կոնսիստորիայի նախնադամ և Էլմիսանի կայքերի կառավարիչ, սակայն վերջիններս դեռ նստած են Էլմիսանում և իրաւունք չեն ստանում իրանց պաշտօնատեղը գնալու»:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լօնդոնից հաղորդում են «Լաֆօնեան» գործակալութեան, որ ցամաքային բոլոր նշանաւոր պետութիւնները յայտնել են Անգլիային, որ եթէ հարաւ-արեւելեան պատերազմը բարեկամող վախճան ունենայ Բրիտանիայի համար, նրանք խաղաղութիւն կայացնելու դէպքում, կը պահանջեն

իրանց համար ձայնի իրաւունք, որովհետեւ նրանք կապված են առևտրական և ֆինանսական կապերով Տրանսկապեան և Օրանժեան հանրապետութիւններին հետ, ուր բնակվում են իրանց հպատակները: Այդ առիթով, որպէս թէ բոլոր պետութիւնները մէջ կատարեալ համեմատութիւն են տիրում: Բացառութիւն չի կազմի նաեւ Գերմանիան, և եթէ Անգլիան ցանկանալու լինի իր իշխանութիւնը տարածել ամբողջ Հարաւարեւելեան Աֆրիկայի վրա, այդ դէպքում որոշված է բաւարարութիւն պահանջել ամենքի համար:

— «Allg. Zeit.» լրագրի Լիսաբոնի թղթակցը պնդում է, որ Պորտուգալացի Սնդիկայի դէմ անբաւականութիւնը օրհրդ տաւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում: Պորտուգալական կառավարութիւնը մինչև այժմ լուռ է, չը ցանկանալով զրգուել ոչ Անգլիային և ոչ իր ժողովրդին, բայց ամսուկի դարոյթը Անգլիայի դէմ այն աստիճանի է հասել, որ միմիայնակ օրհրդանաւարժեց իր համարեց իր նախնաւորութեան տակ առնել Անգլիան և մեծ գովասանքով խօսեց Չեմբերլէյնի ճառի այն կտորի վերաբերմամբ, որտեղ խօսք կայ պորտուգալական գաղթականութիւնների մասին:

ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ձ է թ ժ ա ն տ ա խ տ ի ղ է մ. — «Temps» լրագրի աշխատակից Անրի դը Վարիյը (Henry de Varigny) իր «Ինտերակալ զրոյցներ» մէջ գրում է հետևեալը, հիմնվելով Bulletin medical հրատարակութեան տուած տեղեկութիւնների վրա:

Մի հնդկ թիւիչ պնդում է, թէ հին ժամանակները Արեւելքում, ձէլը գործ էր անում իբրև նախազգուշական և նոյն իսկ բուժարար միջոց: Աւելի նոր ժամանակներում ձէլաւորայի անգլիական հիւպատոսը նկատել է երկրորդում, որ չորս տարեկան ընթացքում ժանտախտից մեռած հազարաւոր մարդկանց մէջ չը կար մէկը, որ ձէլովաւոր լինէր կամ ձիւթահալ: Կարծեք ժանտախտը խորշում է ձէլից, որից հետևում է այն խորհուրդը, թէ այդ պատահաւոր աղաւթները համար պէտք է ժամել հասարակ ձէլով:

Ուրիշ փաստեր էլ կան այդ մասնատող: Ահա օրինակներ. 1792 թին, վենետիկցի մի ըստի նաւագնացներ, որոնք մեծել էին մարմինները ձէլով, չը վարակվեցին ապրելով երեք ժամախտաւորների հետ, որոնք մեռան: Բացի այդ, 27 հոգուց բաղկացած երեք հայ ընտանիքներ վերկիցեցին ձէլի շնորհիւ, չը նայեցով, որ ապրում էին այնպիսի տեղ, ուր բուն էր գրել ժանտախտը: 1804 թին եգիպտական արշաւանքի ընթացքում ժանտախտից աղաւ մնացին այն բոլոր մարդիկ, որոնց լանձնված էր ձիւթով ուղեւորի ոտները: Տունիսում ժանտախտի միջոցին անվարակ մնացին ձիւթահալների բոլոր բանուորները: Այդպէս շատ օրինակներ...

Արեւմտեան տեղերում գործ են անում նոյն միջոց ժանտախտի դէմ, բայց ինչպէս: Ահա ձիւթահալի հիւսնայնոցը քանակայի խորհուրդը: Հենց որ ժանտախտի նշաններ երևան հիւսնայի վրա, պէտք է փակել նրան մի անոթի մէջ, լաւ վառած կրակի մօտ. թաթակով սպունգը տաք ձէլի (ձիւթապողի իւղ, գլիցերին) մէջ և այնքան մածել, որ սպունգը չի իրանդի ամբողջ մարմինը, որ մի լաւ ըրտնի, բայց զգուշանալ, որ հիւսնայը չը մտնի. այնուհետև կրկին նոյն բանը անեն օր մինչև որ լաւանայ:

1792 թին փորձեր են եղել ոչ միայն ձէլով մածել այլ և խմել ձէլ: Այդպէս վարժող 200 հոգուց, ասում են, միայն տասը մեռան: Մարգարէտ 4-ից մինչև 8 ունեցող ձէլ էին կոնծում: Այդ գրեթէ միշտ առատ ըրտնիք էր բերում, աղբիւրով մինչեւ ժամանակ իբրև փոխողական ու լուծողական: «Ճանձերի մօտ մի գիւղում մի մարդ, որի կրնն ու չորս երեխան մեռել էին ժանտախտից, սկսեց ձէլ գործածել, որի շնորհիւ աղաւթիցին մահից ինքն ու մնացած չորս երեխաները»:

Ուրիշ փաստեր կարծեք ցոյց են տալիս, որ ձիւթապողի (գլիցերին) իւղի տեղ կարելի է գործածել ամեն տեսակ ուրիշ ձէլ:

Ձէ կարելի ասել, թէ այս փաստերով բոլորովին հաստատվում է ձէլի օգտակարութիւնը ժանտախտի դէմ, բայց սա այնպիսի անվաւեր և էական միջոց է, որ ամեն մարդ կարող է գործածել փառնպի ժամանակ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԽՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

23 հոկտեմբեր

ԼՕՆԻՍՆ, 22 հոկտեմբեր: Վէյտերի գործակալութիւնը: Զինուորական միմիատրութիւնը յայտարարում է, որ Լէդի-Սմիտի մօտ երկուշաբթի օր տեղի ունեցած պատերազմում սպանվեցին վեց օֆիցերներ և 54 զինուորացի. վիրաւորվեցին 9 օֆիցերներ և 231 զինուորացի:

ՊԱՐԻՉ: «Echo de Paris» լրագրում տպված է գաղտնի ոստիկանութեան կոմիսար Ապրիտի գեկուցումը, որը Բրէսնայի կատարած ընտելութեան հիւր է ծառայել: Զեկուցումը հաստատում է, որ 1898 թինց բոլոր ցոյցերը կատարել են միաբանութեամբ հայրենասէրների, հակասէրների, ֆրանսիական հայրենիքի և միա-

պետական երիտասարդութեան լիզաները: Ապա խօսում է Լօնդոնի մասին, նոյնպէս և միապետականներին և բոնապարտիստներին ագիտացիայի մասին ի նպաստ Դէրուէլի պրօպագանդա անելու նպատակով: Ապա ապացուցում է, որ Դէրուէլ չափ փող էր ստանում Օրլէանեան դքսից, իսկ Դէրուէլը, որին նոյնպէս փող էին առաջարկում, առժամանակ նրանից հրաժարվեց: Դէրուէլը հերքում է այն հանգամանքը, թէ ինքն նպաստելիս է եղել Օրլէանեան դքսի նպատակներին: Նա նպատակ ունէր գրաւել Նիւսեան պալատը: Վերջում խօսվում է Դրէյ-ֆուրի գործի առիթով ցոյց անելու պատրաստութիւնների մասին: Հաղորդվում է լուր, որ մի քանի գեներալներ, որոնց թւում է Նէգրիէ, վճռել էին եռանդուն մասնակցութիւն ունենալ յեղափոխութեան մէջ:

ԿԱՅԱՆ: Հոկտեմբերի 21-ին Կազանի դաւաճակ տղոգում նախկին զինակցի վարժուհի Բորիսովա յայտնեց, թէ զէստովոն արձակեց իրան պաշտօնից այն պատճառով, որ ինքն ամուսնութիւնից դուրս մայր դարձաւ, այն ինչ իրան դայիակիցները ինքն վարչութեան նախագահ Բէկետովն է: Բէկետով ժողովում աշխատում էր ապացուցանել, թէ Բորիսովան իր կամքով է պաշտօնը թողել, բայց նախ ժողովում և եթ կարգվեց, որ նրան ստիպեցին թողնել պաշտօնը: Ժողովը համակրութեամբ վերաբերվեց նրան և որոշեց տալ հարկւր բուքի նպաստ և առաջին աղաւ պաշտօնը:

ԼԻՍԱԲՈՆ: Լօրէնց-Մարկեզից հեռագրում են ժանտախտի երեք նոր դէպքերի մասին:

ԼՕՆԻՍՆ: Վէյտերի գործակալութիւնը: Թագուհու հրովարտակի համաձայն, միլիտարի 35 բաւարիստներ կանչված են նոյեմբերի 28-ին:

Զինուորական միմիատրութիւնը հաղորդում է, որ հաղորդակցութիւնը Լէդի-Սմիտի հետ վերականգնված է:

ԼԵՑՊՏԻՆ: Գերմանական սօցիալիստական կուսակցութեան ի նպաստ բօքսերի կազմած ցոյցին մասնակցեցին մօտ 4000 աղաւարդիկ և կանայք: Ստորագրութիւն բացվեց յօդուտ վերաւորովաների:

ԲԵՐԼԻՆ: Բրիտանից «Tageblatt» լրագրի ստացած մասնաւոր հեռագիրը հաղորդում է, թէ Լէդի կարծում է, որ բօքսերի գօրծ գործը ներկայումս գնում է դէպի Պառլամենտը, բուքը և Գուբբան գրաւելու համար Գուբբանի նաւահանգստի վրա տիրակալող բարձրութիւնները և այդպիսով արեւելու անգլիական գօրծերի ափ իջնելու: Մինչև այժմ Լէդի ոչինչ հաստատող տեղեկութիւն չէ ստացել այն բանի մասին՝ թէ Օրանժեան հանրապետութեան գօրծերը գրաւել են Կօլտսբէրգը, բայց այդ բանը հաւանական է համարում:

ԲԵՐԼԻՆ: «Vossische Zeitung» լրագրին Լօնդոնից հեռագրում են, որ շատ լրագիրներ կասկած են յայտնում, ասելով թէ զինուորական միմիատրութիւնը հրապարակ չէ հանում Լէդի-Սմիտից ստացված բոլոր հեռագիրները:

ԼՕՆԻՍՆ: Երեկոյան լրագիրները հաւատացնում են, որ երկաթուղին Գուբբանի և Լէդի-Սմիտի միջև դեռ աղաւտ է և բօքսերը դեռ ևս յարձակում չը գործեցին Կօլտսբէրգի վրա:

ՎԻԵՆՆԱ: Սերբիական թագաւորը «Neue Freie Presse» լրագրի թղթակցի հետ խօսելիս հերքում է իրան վերագրվող զիտաւորութիւնը վերականգնելու նախկին սահմանադրութիւնը: Սերբիան քաղաքականութեամբ զբաղվող սկուպչինա չէ ցանկանում, այլ ցանկանում է միայն հանգստութիւն և երկրի տնտեսական ծաղկումը: Թագաւորը ցանկանում է իր մօտ պահել իր հօրը, որը մեծ ծառայութիւններ է մատուցել գօրծին: Սերբիայի յարաբերութիւնները դէպի հարեան պետութիւնները և բալկանեան երկրի երը առաջվան պէս լաւ են:

Կ. ՊՈԼԻՍ: Վէյտում անկարգութիւններ տեղի ունեցան բողոքների դժգոհութեան պատճառով սերբիական դպրոցները վերականգնելու դէմ: Անկարգութիւնների տեղը գօրծեր են ուղարկված:

ԼՕՆԻՍՆ: Զարդ Բէրէսօօֆ Միջերկրական ծովի նաւատորմի հրամանատարի օգնական է նշանակված:

ՋԱՐԻՉ: Քաղաքային խորհուրդը մի որոշում ընդարկեց, որով համակրութիւն է յայտնում բօքսերին, որոնք կուլւ են մղում իրանց անկախութեան համար, և ցաւակցութիւն է յայտնում, որ Եւրօպան չը միջամտեց ընդհարման առաջն առնելու նպատակով, նոյնպէս ցանկութիւն յայտնեց, որպէս զի խաղաղութիւնը վերականգնվել:

ԼՕՆԻՍՆ: «Daily News» լրագրին Գուբբանից հեռագրում են. «Այստեղ զայրացած են այն բանի պատճառով, որ բրիտանական

զինուորական ոյծերը Նատաւում շատ քիչ են: Օգնական գօրծերի ուշ հասնելը հիւսթափութիւն է պատճառում: Հոկտեմբերի 18-ին բրիտանական այնքան զինուորների գերումը սաստկացրեց զայրոյթը: Ամեն տեղ սկսում են երկուղ զգալ:

ՖԻՆԱՆՑՈՒՄՍ ՄԱՅՆԻ ՎԻՍ: «Վօլքի» գործակալութիւնը: Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին երէկ, Հէմբուրգ մեծ-դքսական զոյգի ուղեկցութեամբ, այցելեցին Զեյդերի դեղարուեստական ցուցահանդէսը և մի քանի բաներ գնեցին թէ այնտեղ և թէ Բինգի ճննապակեայ ամանեղներին խանութում:

ԼՕՆԻՍՆ: Վէյտերի գործակալութիւնը: Լէդի-Սմիտից հաղորդում են, հոկտեմբերի 20-ից, որ այնտեղ ամենուրեք տիրում է խաղաղութիւն: Թշնամին ոչ մի տրամադրութիւն չէ ցոյց տալիս ճակատամարտ սկսելու: Անգլիական թիւղանութները գրաւեցին գօրծը դրբեր Լէդի-Սմիտի շուրջը: Զօրի տրամադրութիւնը յուսալի է:

Երեկոյան լրագիրներին հաղորդում են Պիտերմարիթբուրգից, հոկտեմբերի 21-ից. «Լէդի-Սմիտ այսօր բոլորովին հանդիստ է: Բազմաթիւ տղամարդիկ, կանայք և երեխաներ դուրս եկան Լէդի-Սմիտից երկաթուղու գնացքով, ուղեկցութեամբ գրահապատ երկաթուղական գընացքի:

ՊԱՐԻՉ: Նիսից և Պրիւից ստացած հեռագիրները հաղորդում են սաստիկ հեղեղների մասին: Ճանապարհները ծածկված են ջրով: Հեղեղը տարել է մի քանի կամուրջներ և տներ: Բոնա գետը սաստիկ բարձրանում է և սկսում է դուրս գալ ափերից Ալմինիոնի մօտ:

«Echo de Paris» լրագրի մէջ հրատարակված է Լէպիտի ցուցմունքը բարձրագոյն դատարանի առաջ: Ցուցմունքից երևում է, որ հայրենասէրների, հակահրէական և միապետական երիտասարդութեան լիզաները գործել են համեմատելիութեամբ: Դէրուէլը եղել է արքայականների դաւակից, բայց մի և նոյն ժամանակ սքցող: «Gaulois» լրագիրը հաղորդում է, որ Մօնակօի դուքսը 2000 Ֆրանկ է ուղարկել Ֆրանսիայի տիկիններին, որոնք հիւանդանոց են կազմակերպում Խօհաննէսբուրգի համար:

24 հոկտեմբեր

ԼՕՆԻՍՆ, հոկտեմբերի 23-ին: Վէյտերի գործակալութիւնը: Զինուորական միմիատրի հաղորդած հեռագիրը ասում է, որ Կօլտսբէրգի միմիատրութեան մէջ լուր է ստացված՝ թէ բրիտանական գօրծերը Կօլտսբէրգ յետ են նահանջում աւելի դէպի հարաւ: հաւաքվելու համար: Զինուորական միմիատրութիւնը աւելացնում է, որ այդ տեղում ընդհարումների մասին ոչ մի տեղեկութիւն չէ ստացված:

ԲՈՒԳԵՐԼԱՅԻՑ: Բօքսերի մի գօրծաւորը ամսի 21-ին անցաւ Օրանժեան գետը, Բիտուլիայի մօտ: Սպասվում էր, որ կէսօրից յետոյ 300 մարդ նորից կանցնեն:

ԼՕՆԻՍՆ: Վէյտերի գործակալութիւնը: հաղորդում է, որ Կօլտսբէրգի մօտ գտնվող երկաթուղական կամուրջը մնացել է անվնաս: Պայթիւնի տեղ ընդունել են ազդանշան թիւղանօթագութիւնը:

ՄԱՍՏԵՐԻՍ: Վէյտերի գործակալութիւնը: Հաղապի անգլիական դեսպանը ճանապարհը լաւ չորեքշաբթի օր, երեկոյան, դէպի Լօնդոն, որտեղ կը մնայ մինչև տարվայ վերջը: Ինչպէս լուր է այստեղի «Վէյտերի» գործակալութիւնը, դուքի են հիմքից այն լուրերը, որ իբր թէ դեսպանի գնալու պատճառը Տրանսկապի օգտին տեղի ունեցած համակրական ցոյցերն էին:

25 հոկտեմբեր

ԲԵՐԼԻՆ: Կայսրը երէկ ընդունեց զմութեան ընդերքին և կամաւոր-թիւններին, հիւանդներին հոգ տանելու համար, որոնք ճանապարհ են ընկնում Տրանսկապ:

ԿՈԼԵՂՈ: 21 հոկտեմբերի, 1 ժամ կէսօրից յետոյ: Բօքսերը հարաւից կրակ բաց արին Լէդի-Սմիտի դէմ թիւղանօթներին, որոնք դեռ տեղված են Կօլտսբէրգի և Ուայտի բանակի միջև: Բօքսերի ռմբակոծութիւնը Կօլտսբէրգի ուղղութեամբ ոչինչ վնաս չը պատճառեց կամ շատ աննշան:

ԳԱՐՄԵՏԱԿՏ: Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին նոյեմբերի «Darmstaeter Zeit.» լրագրի խօսքով, 5000 մարկ բարեգործական հիմնադրութիւնների և 5000 մարկ Կարմաւորի աղքատների համար:

ԼԵԻԻ-ՍՄԻՏ: Այսօր, առաւօտեան 6 ժամին

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.